ગણિત

BookMark

Гузель Яхина

Зулейха

Зулейха открывает глаза

BookMark

Գուզել Յախինա

ԶՈՒԼԵՅԽԱ

Զուլեյխան բացում է աչքերը

Վեպ

Թարգմանությունը ռուսերենից՝
Նաիրա Խաչատրյանի

ԵՐԵՎԱՆ
2021

BookMark

ՀՏԴ 821.161.1-31 Յախինա
ԳՄԴ 84(2Ռուս)-44
Յ 220

Յախինա Գուզել
Յ 220 Զուլեյխան բացում է աչքերը: Վեպ / Գուզել Յախինա.- Եր.: Newmag, 2021.- 432 էջ:

1930 թվական. Իոսիֆ Ստալինի կուլակաթափման ծրագիրը մեծ թափ է հավաքում Խորհրդային Միությունում: Զոհերի մեջ է թաթարների երիտասարդ մի ընտանիք: Ամուսինը սպանվում է, կինն աքսորվում է Սիբիր: Գյուղաբնակ Զուլեյխային հարյուրավոր աքսորյալների հետ բեռնավագոնով քշում են Սիբիր:

Անտառաճանաչ գյուղացիները, մտավորականներն ու հանցագործները, մուսուլմաններն ու քրիստոնյաները, հեթանոսներն ու աթեիստները, ռուսները, թաթարները, գերմանացիները, չուվաշները՝ բոլորը հանդիպում են Անգար գետի ափին: Նրանք անծայրածիր տայգայում ամեն օր պայքարում են խստաշունչ բնության ու անողոք պետության դեմ՝ պաշտպանելով ապրելու իրենց իրավունքը:

ՀՏԴ 821.161.1-31 Յախինա
ԳՄԴ 84(2Ռուս)-44

Գրքի գլխավոր գործընկեր
«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ
www.ena.am

ISBN 978-9939-884-13-4
© Guzel Yakhina, all rights reserved
Published by arrangement with ELKOST Intl. Literary Agency
Armenian Translation copyright © 2021 by Newmag Publishing House
Գուզել Յախինա «Զուլեյխան բացում է աչքերը» © 2021, «Նյու Մեգ» ՍՊԸ

Այս գրքի հրատարակման բոլոր իրավունքները պատկանում են «Օրակուլ» ՍՊԸ-ին: Համաձայն կնքված պայմանագրի՝ հրատարակչության գրքերը ներկայացված են որպես հայ-ռուսական «Օրակուլ» մատենաշար:

ԳՐՔԻ ՄԱՍԻՆ

Գուզել Յախինան Լև Տոլստոյի լավագույն ավանդույթներով ցույց է տալիս, թե մարդիկ որքան անզոր են պատմության հորձանուտում:

Los Angeles Times

Հզոր պատում մարդկանց մասին, որոնք ընկել են 20-րդ դարի մեծագույն ողբերգություններից մեկի թակարդը:

The Times

Յախինայի արձակը համոզիչ է: Զուլեյխայի իրատեսությունը և հարմարվելու ունակությունը գրավում են ընթերցողի ուշադրությունը: Որդու անսպասելի ծնունդը... և անօգնական կնոջից նրա փոխակերպումն ուժեղ գլխավոր հերոսի. սա Յախինայի վեպի առանձնահատկություններից մեկն է:

Financial Times

Գրված է հարուստ և պատկերավոր լեզվով... Զուլեյխայի կյանքի պատմությունն անարդարության և ցավի մասին է, բայց նաև կապանքներից ազատվելու և վերածնունդ ապրելու պատում է:

Associated Press

Գուզել Յախինայի «Զուլեյխա» վեպը հիշեցնում է, թե որքան դաժան էր խորհրդային համակարգը… Վեպը հիանալի կերպով վերարտադրում է պատմական մի շրջան, որը հետզհետե մոռացության է մատնվում...

New York Times Book Review

Գողտրիկ պատմություն՝ մարդու տոկունության մասին:

The Calvert Journal

1930 թվական. Իոսիֆ Ստալինի կուլակաթափման ծրագիրը մեծ թափ է հավաքում Խորհրդային Միությունում: Զոհերի մեջ է մի երիտասարդ, թաթար ընտանիք: Ամուսինը սպանվում է, կինն աքսորվում է Սիբիր: Այս պատմությունը գոյատևման և հաղթանակի մասին է: 2015-ին «Ռուսական

Բուկեր» մրցանակի դափնեկիր դարձած այս վեպում հեղինակը նկարագրում է Գուլագից մազապուրծ փրկված իր տատիկի կյանքը:

The Millions, "Most Anticipated Books of 2019"

Սա ռուսական հզոր ասք է, որը համակողմանիորեն ներկայացնում է կյանքը կոմունիստական կուսակցության իշխանության տարիներին... Հեղինակը մեծ վարպետությամբ է պատկերել այն ժամանակների աշխարհը:

Marjorie's World of Books, blog review

Զուլեյխան օժտված է մի էներգիայով, որին դժվար է դիմակայել:

Strong Words

Գուզել Յախինան զարմանալի ճշգրտությամբ փոխանցել է կանանց վերաբերմունքը սիրո հանդեպ: Ոչ թե սիրո առարկայի, այլ հենց սիրո հանդեպ:

Աննա Նարինսկայա, գրաքննադատ

Յախինայի դեբյուտային վեպը հրատարակումից հետո առաջին երեք տարիներին այնպես ցնցեց ռուսական գրական աշխարհը, որ նրա երկրորդ գիրքը Դեն Բրաունի և Ջոջո Մոյեսի միջազգային բեսթսելլերների հետ գլխավորեց 2018-ի վարկանշային աղյուսակները... Այս պատմությունը մի կնոջ մասին է, որն իր կյանքում բազմաթիվ վայրագություններ է տեսել, սակայն չի կորցրել կարեկցելու ունակությունը: Վեպն ունի կինեմատոգրաֆիայի տարրեր և բարդ սյուժե:

Meduza

Հիանալի և գերազանց վեպ՝ լոկ դրան նվիրվելու և մնացյալն անտեսելու համար:

Մանուել Աստուր, El Comercio-Cultura

Իրատեսական շարադրանքով ու անսովոր զորությամբ էպոս: Զգացվում է մեծ վարպետներ Բուլգակովի և Գոգոլի շունչը:

Մերսեդե Մոնմանի, ABC

– Լա՞վ վեպ է:
– Անկասկած: Գերազանց վեպ է:
– Լա՞վ է գրված, հանգամանալի՞ց է կառուցված, հետաքրքի՞ր է:
– Գուցե այո, բայց չգիտեմ: Չեմ կարող հստակ ասել, քանի որ վեպը կարդացել եմ՝ դրանում լիովին ընկղմված լինելով: Թվում էր՝ պետք էր առաջ տալ գրքի էջերը՝ շնչելու հնարավորություն ունենալու համար: Եզակի նյութից ստեղծված և մարդու սրտից ծնված վեպ է:

Ալմուդենա Գրանդես, El País

Եղելությունը պատմվում է արագահոս գետի պես, որն ալիք է տալիս ու գահավիժում սահանքներից: Ցախինան զարգացնում է իր կրակոտ, կինեմատոգրաֆիկ արձակը՝ ընթերցողին փոխանցելով իր կիրքը: Զուլեյխայի մասին հզոր վեպը չի կարող անտարբեր թողնել որևէ ընթերցողի:

Մոնիկա Զգուստովա, El País-Babelia

Գրական գեղեցիկ մեկնարկ. մեկտեղված են պատմողական ուժն ու հոգեբանական նուրբ խութերը:

Ելենա Բալզամո, Le Monde des Livres

Բնության դաժան և հագեցնող նկարագրությունները տրտմության երանգներ են հաղորդում պատմությանը, և սա ընթերցողին թույլ չի տալիս գիրքը ձեռքից վայր դնել:

Ժան-Բատիստ Սեբ, Études

Հրատարակչական այս շրջանի լավագույն նորույթն է: Ռուսական սիրելի գրական ժանրը չի մեռել այն ընթերցողի համար, որը գրքերում վեհություն ու կարեկցանք է փնտրում:

Էլիզաբեթ Բարիյե, Le Figaro

Մարդկային տառապանքներն ընդունող, բայց և հույս ծնող պատմություն:

Ժորժ Նիվա

«Զուլեյխան բացում է աչքերը» վեպը հիասքանչ ստեղծագործություն է, որը երիտասարդ թաթար հեղինակը գրել է հուզիչ, իրական և մարդկային

ապրումներով: Գուզել Յախինան ստեղծել է ուժեղ և վճռական անհատականություն դարձած կնոջ ցնցող դիմանկար:

Բեատրիս Պուտենյա, Librairie Les Cyclades, Page des Libraires

Հզոր, գթառատ, խստաշունչ բնությունը պատմվածքին այնպիսի կենսական եռանդ է հաղորդում, որը ստվերում է կյանքի պայմանների թշվառությունը:

Իզաբել Ռուֆ, Le Temps

Վերանայելով ռուսական խոշոր վեպերի ավանդույթները՝ Գուզել Յախինան ստեղծել է հրաշալի կնոջ դիմանկար:

Էստել Լենարտովիչ, Lire

Այս կնոջ կերպարը միաժամանակ և՛ սարափելի է, և՛ էկզոտիկ, և՛ լուսավոր: Նշանակալի վեպ է, որի հերոսուհին երկար ժամանակ հուզում է ընթերցողին:

Ան Կիսել, Ouest France

Զորեղ վեպ:

Ստեֆան Օբուար, L'Humanité

Ռուսական մեծագույն վեպ:

Neues Deutschland

Ընթերցանության հուզիչ և կլանող փորձառություն:

Freies Wort

«Զուլեյխան» մխրճվում է սիրտդ: Այս երիտասարդ հեղինակից կարող ենք ավելին ակնկալել:

Lausitzer Rundschau

Կարդացածս ամենահուզիչ վեպերից մեկն է: Այս գիրքն իրականում երիտասարդ թաթարուհու պատմություն է՝ արկածային ֆոնով:

Die Tageszeitung

Դրամատիկ և զգացմունքային մանրամասների առատությունը մեզ ներքաշում է այս սարսափելի պատմության մեջ: Գուզել Յախինան գիտի, թե ինչպես է պետք գրել կինոյի պես:

Dresdner Neueste Nachrichten

Անհնար է չհուզվել Սիբիրի դժոխքում հայտնված այս կնոջ ճակատագրից, որը լի է գոյատևման զորեղ ուժով:

Lauitzer Rundschau

Այս ցնցող, հուզիչ վեպում սև ու սպիտակ չկա: Միակ արժեքը մարդն է:

Kölnische Rundschau

«Զուլեյխան բացում է աչքերը» վեպն այս տարի լույս տեսած ամենահուզիչ գրքերից մեկն է:

Berliner Zeitung

Իր վեպի գլխավոր հերոսին նկարագրելու համար Գուզել Յախինան օգտագործում է ազդեցիկ, ցնցող նկարագրություններ:

MDR Kultur

Բավական հաջողված, հեռանկարային դեբյուտ:

WDR 5

Ուշագրավ գիրք:

Goslarsche Zeitung

Հեղինակն իր հերոսուհուն մեր սրտերի մեջ ուղղակի փորագրում է իր սուր հայացքով ու սահուն խոսքով:

Brigitte Woman

Գուզել Յախինան կարողացել է ստալինյան ժամանակաշրջանի սարսափների վիճահարույց թեման վերածել զգացմունքային, հոգեպարար արվեստի գործի՝ չտրվելով բարոյաուսուցողական խրատաբանությանը:

SWR 2

BookMark

Բովանդակություն

Մաս առաջին | **Թրջած հավ**

Մեկ օր 15
Պատուհանը թակում են 42
Հանդիպում 62

Մաս երկրորդ | **Դեպի ո՞ւր**

Ճանապարհ 85
Սուրճ 101
Կազան 120
Ցպահանջ 139
Փախուստ 161
Բեռնանավ 181

Մաս երրորդ | **Ապրել**

Երեսուն 207
Ծնունդ 221
Առաջին ձմեռ 240
Ավան 276
Լավ մարդ 308
Շահ թռչուն 331
Չորս հրեշտակ 346
Սև վրան 366

Մաս չորրորդ | **Վերադարձ**

Պատերազմ 389
Յուզուֆ և Զուլեյխա 405

BookMark

BookMark

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

Թրջած հավ

BookMark

BookMark

Մեկ օր

◇◇◇

Զուլեյխան բացում է աչքերը: Մութ է, ինչպես մառանում: Բարակ վարագույրի հետևում ֆսֆսում են կիսաքուն սագերը: Մեկ ամսական մտրուկը շրթունքն է ճպպացնում, մոր կուրծքն է փնտրում: Պատուհանից այն կողմ՝ գլխավերևում, հունվարյան բքի խուլ տնքոցն է, պատուհանից չի փչում. ապրի Մուրթազան, մինչև ցրտերն ընկնելը ճեղքերը փակեց: Մուրթազան լավ տանտեր է: Եվ լավ ամուսին է: Մուրթազան հնչեղ ու սարսափելի խռմփացնում է տղամարդկանց կողմում: Քնի՛ր խորը, լուսաբացից առաջ քունն ամենախորն է:

Ժամանակն է: Ամենազո՛ր Ալլահ, օգնի՛ր իրականացնել մտածածս, թող ոչ ոք չարթնանա:

Զուլեյխան անաղմուկ կախում է բոբիկ ոտքը, հետո՝ երկրորդը, հենվում վառարանին ու վեր կենում: Գիշերվա մեջ հատակը սառել է, ջերմությունը՝ չքվել, սառը հատակն այրում է ոտնաթաթերը: Կոշիկ հագնել չի կարելի, իսկ ոտնամաններով անաղմուկ անցնել հաստատ չի ստացվի, որևէ տախտակ անպայման կճռռա: Ոչի՜նչ, Զուլեյխան կդիմանա: Ձեռքով բռնվելով վառարանի չեչոտ կողքից՝ հասնում է կանանց կողմի ելքին: Այստեղ նեղ է ու անհարմար, բայց Զուլեյխան հիշում է ամեն անկյուն, ամեն խոչընդոտ ու ելուստ. կյանքի կեսը ճոճանակի պես դեսուդեն է անում տան մեջ, ամբողջ օրը եռման, լիքը թասերով կաթսայի մոտից դեպի տղամարդկանց կողմ է գնում, տղամարդկանց կողմից էլ հետ գալիս՝ դատարկ, սառը թասերով: